

ՆԻԼՍԻ ԶԱՐՄԱՆԱՀՐԱԸ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ  
ՎԱՅՐԻ ՍԱԳԵՐԻ ՀԵՏ

I. ՏՂԱՆ  
ԹՁՈՒԿԸ

*Քսանը մարտի, կիրակի*

Կար-չկար մի տղա՝ բարձրահասակ, նիհար, ճեփ-ճերմակահեր: Նա սովորական մի տղա էր՝ մոտավորապես տասնչորս տարեկան, սակայն նրանից ոչ մի օգուտ չկար: Նա շատ էր սիրում ուտել ու քնել: Եվ վարպետորեն անկարգություն էր անում:

Կիրակի օր էր: Տղայի ծնողները պատրաստվում էին եկեղեցի գնալու: Տղան, որ հագել էր կաշվե անդրավարտիք, թեզանիքներով վերնաշապիկ և բաձկոնակ, նստել էր սեղանի ծայրին և մտածում էր. «Ա՛յ թե բախտս բերեց: Հայրս ու մայրս կգնան, ես վերջապես մի երկու ժամ մենակ կմնամ ու ինչ ուզեմ, կանեմ: Հորս հրացանը կվերցնեմ և կկրակեմ: Եվ ինձ ոչ ոք չի արգելի»:

Բայց հայրը կարծես կռահեց, թե որդին ինչ է մտածում, որովհետև հենց շենքին կանգնած՝ հանկարծ շրջվեց ու տղային ասաց.

- Քանի որ մեզ հետ եկեղեցի չես գալիս, նստի՛ր տանը և կիրակնօրյա քարո՛ղը կարդա: Խոստանո՞ւմ ես:

- Լավ, - ասաց տղան, բայց մտածեց. «Կկարդամ, բա ո՞նց»:

Տղայի մայրը, ի գարմանս նրա, բուխարու վերևի գրադարակից ճարակորեն իջեցրեց *Լյութերի մեկնությունը*, դրեց սեղանին՝ պատուհանի առջև, և բացեց օրվա քարոզի էջը: Նա բացեց նաև *Նոր Կտակարանը* և դրեց *Մեկնության* կողքին: Հետո սեղանին մոտեցրեց մեծ բազկաթոռը, որը մեկ տարի առաջ գնվել էր Վեմմենհյոգի պաստորական աճուրդում. հորից բացի՝ ոչ ոք այդ բազկաթոռին նստելու իրավունք չուներ:

Տղան նստած մտածում էր, որ մայրն իզուր է այդպես տանջվում. ինքը մեկ-երկու էջից ավելի կարդալու մտադրություն չունի: Բայց հայրը արդեն երկրորդ անգամ կարծես կարդաց նրա մտքերը: Նա մոտեցավ տղային և խստորեն պատվիրեց.

- Տե՛ս, կարգին կկարդաս: Որովհետև երբ վերադառնամ, մանրամասն հարցնելու եմ, և եթե նույնիսկ մի էջ բաց թողած լինես, մեղքը քո վիզը:

- Քարոզը տասնչորսուկես էջ է, - ասաց մայրը՝ ասես ցանկանալով չափել նրա դժբախտությունը: - Դու անմիջապես պետք է նստես և սկսես կարդալ, եթե ուզում ես հասցնել:

Եվ նրանք գնացին: Իսկ տղան, կանգնած դռան մոտ, նայում էր նրանց ու մտածում, որ թակարդն է ընկել: «Երևի գնում են՝ իրենցից գոհ, որ շատ լավ բան են արել, որ ստիպել են ինձ նստել ու կաշել այդ քարոզին, մինչև վերադառնան», - մտովի դժգոհում էր նա:

Բայց հայրն ու մայրը բոլորովին էլ չէին ուրախանում. ընդհակառակը, շատ մտահոգ էին:

Նրանք աղքատ գյուղացիներ էին. մի փոքրիկ հողաբաժին ունեին: Երբ դեռ նոր էին այստեղ եկել, հազիվ էին կարողանում կերակրել մի խոզի և զույգ հավերի: Բայց նրանք շատ աշխատասեր ու շնորհքով մարդիկ էին, և այժմ արդեն կովեր ու սագեր էլ ունեին: Ամեն ինչ հրաշալի է նրանք կյանքում, և այդ գեղեցիկ առավոտ նրանք կարող են եկեղեցի գնալ բավարարված և երջանիկ, եթե ստիպված չլինեին մտածելու իրենց որդու մասին: Հայրը բողոքում էր, որ նա անհնազանդ է ու ծույլ, դպրոցում ոչինչ չի ուզում սովորել, աշխատել չի սիրում, որ ոչ մի բանի պիտանի չէ, միայն մի կերպ սագեր է արածեցնում: Մայրը չէր ժխտում, որ դա ճիշտ է, բայց ավելի շատ նրանից էր վշտանում, որ տղան վատ բնավորություն ունի. դաժան է կենդանիների նկատմամբ, անբարյացակամ՝ մարդկանց հանդեպ:

- Թող Աստված փափկեցնի նրա կարծր սիրտը և մեղմի բնավորությունը, - ասաց մայրը, - այլապես նա փորձանք կբերի թե՛ իր, թե՛ մեր գլխին:

Իսկ տղան կանգնած երկար խորհում էր՝ կարդա քարոզը, թե՞ ոչ: Վերջապես նա եզրակացրեց, որ այս անգամ լավ է չհակառակվել: Նա նստեց հայրական բազկաթոռին և միառժամանակ կիսաձայն կարդաց քարոզը. սեփական մռթմռթոցից թմրելով՝ նա շուտով նիրհեց:

Դրսում հրաշալի եղանակ էր: Դեռ միայն մարտի քսանն էր, բայց տղան ապրում էր Արևմտյան Վեմմենիոզ ավանում՝ Սքանե նահանգի հարավում, որտեղ զարունն արդեն լիիրավ տեր էր: Կանաչը դեռ քիչ էր, բայց ամեն ինչ թարմ էր ու խոստումնալից: Փոսերը լի էին ջրով, առվի եզրերին ծաղկել էին տատրակները /խոճկորիկները/: Քարերի արանքում աճած խոտը մուգ էր ու փայլուն: Թվում էր, թե հեռվում հաճարենիների անտառը վայրկյան առ վայրկյան փաթթամանում ու խտանում է: Երկինքը կապույտ-կապույտ էր: Տան դուռը բաց էր, և սենյակում լսվում էր արտույտի երգը: Բակում վազվզում էին հավերն ու սագերը, իսկ կովերը, որոնք իրենց գոմում զգացել էին գարնան բույրը, ժամանակ առ ժամանակ բառաչում էին՝ ի նշան հավանության:

Տղան կարդում էր ու նիրհում՝ պայքարելով քնի դեմ: «Ո՛չ, ես չեմ ուզում քնել, - մտածում էր նա, - որովհետև այսքանը մինչև կեսօր չեմ հասցնի սովորել»:

Եվ այնուամենայնիվ նա քնեց:

Տղան չիմացավ՝ շա՞տ քնեց, թե՞ քիչ, բայց արթնացավ իր հետևում լսվող թեթև աղմուկից:

Պատուհանագոգին՝ ճիշտ տղայի դիմաց, մի փոքրիկ հայելի կար. նրա մեջ արտացոլվում էր համարյա ողջ սենյակը: Այնպես պատահեց, որ երբ տղան բարձրացրեց գլուխը և նայեց հայելուն, տեսավ, որ իր մոր սնդուկի կափարիչը բաց է:

Մայրը մի մեծ, ծանր, երկաթներով ամրացված կաղնեփայտի սնդուկ ուներ, որը ոչ ոքի թույլ չէր տալիս բացել: Այստեղ նա խնամքով պահում էր այն իրերը, որոնք ժառանգել էր իր մորից. դրանք առանձնապես թանկ էին նրա համար: Այստեղ կային կարմիր հաստ կտորից կարված գեղջկական հնաոճ զգեստներ՝ կարճ իրանակապերով ու բազմածալ շապիկներով, քրոց փողկապի համար՝ մարգարտով ընդելուզված, օսլայած սպիտակ գլխաշորեր և արծաթե ծանր զարդեր ու շղթաներ: Մարդիկ այդպիսի հագուստ արդեն չէին հագնում, և մի քանի անգամ մայրը ուզեցել էր ազատվել այդ հին իրերից, բայց, ինչևէ, այդպես էլ սիրտ չէր արել:

Եվ հիմա տղան հայելու մեջ պարզորոշ տեսնում էր, որ սնդուկի կափարիչը բաց է: Նա չէր հասկանում, թե դա ինչպես է պատահել. չէ՞ որ մայրը գնալուց առաջ այն փակել էր: Նա իր թանկարժեք սնդուկը երբեք բաց չէր թողնում, երբ տղան տանը մենակ էր մնում:

Տղան հիմա արդեն լուրջ վախեցավ: Նա կարծեց, թե տուն գող է մտել: Նա չէր համարձակվում նույնիսկ շարժվել և ուղիղ նստած՝ նայում էր հայելուն:

Հանկարծ ինչ-որ սև ստվեր ընկավ սնդուկի եզրին: Նա անքթիթ նայում էր և չէր ուզում հավատալ իր աչքերին: Այդ ինչ-որ բանը, որը սկզբում ստվեր թվաց, ավելի ու ավելի լավ էր երևում, և շուտով տղան տեսավ, որ սնդուկի ծայրին թզուկ է նստած:

Ճիշտն ասած, նա շատ պատմություններ էր լսել թզուկների մասին, բայց մտքով անգամ չէր անցել, որ նրանք այդքան պստիկ արարածներ են: Այս մեկը՝ սնդուկի եզրին նստածը, տղայի ձեռքի ափից մեծ չէր: Նա կնճռոտ էր, անմորուք և շատ ծեր: Տնային ոգին սև երկար սքեմով էր, մինչև ծնկները հասնող վարտիքով և սև լայնեզր գլխարկով: Սպիտակ ժանեկազարդ օձիքով ու թեզանիքներով, ճարմանդներով կոշիկներով, ծնկների ժապավենակապերով նա շատ կոկիկ և նույնիսկ տոնական տեսք ուներ: Նա սնդուկից հանել էր զարդանկար քորոցը և այնպիսի հիացմունքով էր նայում հին ձեռագործին, որ չէր էլ նկատել, որ տղան արթնացել է:

Տղան փոքր-ինչ զարմացել էր՝ թզուկ տեսնելով, բայց և այնպես շատ չէր վախեցել: Ինչպե՞ս կարելի է վախենալ մարդուկից, որ այդքան փոքր է: Մինչ թզուկն այնքան էր խորասուզված մտքերի մեջ, որ ո՛չ տեսնում էր, ո՛չ լսում, տղան մտածեց, որ շատ ծիծաղելի կլինի նրա գլխին մի խաղ խաղալ՝ հրել գցել նրան սնդուկի մեջ և կափարիչը փակել կամ դրա նման մի բան անել:

Բայց տղան չհամարձակվեց ձեռքերով դիպչել թզուկին և սկսեց շուրջը նայել, որ նրան հրելու համար մի հարմար բան գտնի: Նրա հայացքը թափառում էր բազմոցից բացվող փեղկերով սեղանիկ, սեղանիկից բուխարի: Նա նայում էր կաթսաներին, բուխարու մոտ՝ դարակին դրված սրճեփին, ջրի դույլին, որ դռան մոտ էր, և գդալներին, դանակներին ու պատառաքաղներին, ափսեներին և բաժակապնակներին, որոնք երևում էին սպասքապահարանի կիսաբաց դռնից: Նա նայեց իր հոր հրացանին, որն ամրացված էր պատին՝ Դանիայի արքայական ընտանիքի<sup>1</sup> նկարի կողքին, և՛ խորդենուն, և՛ ֆուքսիային, որոնք ծաղկել էին պատուհանագոգին դրված թաղարներում: Վերջապես նրա հայացքը կանգ առավ թիթեռ որսալու ցանցի վրա, որը լուսամուտի փեղկից էր կախված: Մի ակնթարթում տղան ցատկեց, վերցրեց ցանցը, թռավ և գցեց սնդուկի եզրին: Ու ինքն էլ զարմացած մնաց հաջողությունից: Նա չիմացավ էլ, թե ինչպես եղավ, որ ցանցը գցեց թզուկին: Մարդուկը գլխի վրա ընկել էր ցանցի հատակը և չէր կարողանում դուրս գալ:

Տղան գաղափար անգամ չուներ, թե ինչ է անելու իր գերու հետ: Նա միայն ցանցը թափ էր տալիս, որ թզուկը չկարողանա ոտքի կանգնել և վեր մազլցել:

Հանկարծ թզուկը սկսեց խոսել: Նա խեղճ-խեղճ խնդրում էր տղային իրեն ազատել:

- Ես այսքան տարի ձեր ընտանիքին երջանկություն եմ բերել,- ասաց նա, - և ավելի լավ վերաբերմունքի եմ արժանի: Եթե ինձ բաց թողնես, քեզ արժաթե հին

դրամ կտամ, արծաթ գդալ և էլի մի ոսկեդրամ, որը նույնքան մեծ է, որքան քո հոր ոսկե ժամացույցի կափարիչը:

Տղային այս խոստումներն այնքան էլ գայթակղիչ չթվացին, բայց թզուկին իր ձեռքը զցելուց հետ սկսել էր նրանից վախենալ: Ճիշտն ասած, նա զգում էր, որ գործ ունի խորհրդավոր և գերբնական ուժի հետ, որն իր աշխարհի հետ կապ չունի, և միայն շատ ուրախ էր՝ ազատվելու այդ սարսափելի բանից:

Այդ պատճառով էլ նա անմիջապես համաձայնեց և ցանցը պահեց, որ թզուկը մազլցի վերև: Բայց երբ թզուկն արդեն համարյա դուրս էր եկել, տղան մտածեց, որ շատ լավ բաներ կարող էր ուզել նրանից. ամենից առաջ կարող էր պահանջել, որ մարդուկն իր գլուխը մտցնի քարոզը: «Ի՞նչ հիմարն եմ, որ բաց եմ թողնում նրան», - մտածեց նա և սկսեց ուժեղ թափ տալ ցանցը, որ թզուկը նորից հատակն ընկնի:

Բայց հանկարծ տղան այնպիսի մի ապտակ ստացավ, որ կարծեց, թե գլուխը մաս-մաս եղավ: Նա դիպավ մի պատին, հետո՝ մյուսին, ընկավ հատակին ու կորցնելով գիտակցությունը՝ մնաց պառկած:

Երբ արթնացավ, սենյակում մենակ էր: Սնդուկի կափարիչը փակ էր, իսկ թիթեռ որսալու ցացը իր սովորական տեղում էր՝ պատուհանի փեղկին: Եվ եթե չզգար, թե ինչպես է վառվում աջ այտը, կկարծեր, թե երազում է տեսել: «Ամեն դեպքում հայրիկն ու մայրիկը կանդեն, որ ոչինչ էլ չի եղել, - մտածեց նա: - Եվ թզուկի մասին պատմությանն էլ չեն հավատա, քարոզը ծայրից ծայր կհարցնեն: Ավելի լավ է՝ կարդամ»:

Բայց երբ սեղանին էր մոտենում, մի հետաքրքիր բան նկատեց: Անհնար է, որ սենյակը մեծացած լիներ: Բայց այդ դեպքում ինչո՞ւ է ինքը սովորականից ավելի շատ քայլեր անում սեղանին մոտենալու համար: Ի՞նչ է պատահել աթոռին: Սեղանի կողքին այն այդքան էլ մեծ չէր երևում, բայց հիմա նա պետք է նախ աթոռի ոտքերը միացնող փայտին բարձրանար, հետո մազլցեր վերև, որ նստատեղին հասներ: Սեղանի հետ էլ էր հրաշք կատարվել: Գրքին հասնելու համար նա ստիպված էր բազկաթոռի արմունկին բարձրանալու:

- Տեսնես ի՞նչ է կատարվում, - ինքն իրեն հարցրեց տղան: - Ինձ թվում է՝ թզուկը կախարդել է և՛ սեղանը, և՛ աթոռը, և՛ մեր ողջ տունը:

«Սեկնությունը» նույն տեղում էր և կարծես թե չէր փոխվել: Բայց նրա հետ էլ էր ինչ-որ բան կատարվում, որովհետև տղան ոչ մի բառ չկարողացավ կարդալ և ստիպված եղավ բարձրանալու և կանգնելու հենց գրքի վրա:

Այնուամենայնիվ նա մի քանի տող կարդաց, բայց երբ վերև նայեց, աչքն ընկավ հայելուն: Տղան բացականչեց.

- Տեսե՛ք, այստեղ մի ուրիշն էլ կա:

Հայելու մեջ նա տեսավ մի փոքրիկ-փոքրիկ արարածի, որի հագին կաշվե անդրավարտիք էր, իսկ գլխին՝ սրածայր թասակ:

- Տես է, այդ մեկը ճիշտ ինձ նման է հագնվել, - ասաց տղան՝ զարմանքից իրար խփելով ձեռքերը:

Ու տեսավ, որ հայելու փոքրիկն էլ նույն բանն արեց: Հետո տղան սկսեց քաշքշել իր մազերը, կսմթել արմունկներն ու պտտվել: Հայելու մեջ երևացող փոքրիկն անմիջապես կրկնում էր նրա բոլոր շարժումները:

Տղան մի քանի անգամ վազեց հայելու շուրջը՝ տեսնելու՝ արդյոք նրա հետևում փոքրիկ մարդ չի թաքնվել, բայց այնտեղ ոչ ոք չկար: Հիմա արդեն նա հասկացավ, որ թզուկը կախարդել է իրեն. հայելու մեջ երևացող փոքրիկ արարածը հենց ինքն է:

### ՎԱՅՐԻ ՍԱԳԵՐԸ

Եվ այնուամենայնիվ տղան չէր կարողանում հավատալ, որ թզուկ է դարձել: «Սա երազ է՝ տարօրինակ մի բան, ուրիշ ոչինչ: Մի քանի րոպե որ սպասեմ, նորից մարդ կդառնամ», - մտածում էր նա:

Նա կանգնեց հայելու առջև ու պինդ փակեց աչքերը, մի երկու րոպե հետո նորից բացեց՝ հուսալով, որ ամեն ինչ անցել է: Բայց ավա՜ղ. ինքը նույն փոքրիկն էր մնացել: Ճիշտ է, արտաքնապես բոլորովին չէր փոխվել: Նույն բարակ, ծղոտի գույնի մազերը, քթի պեպենները, նույն կարկատանները կաշվե անդրավարտիքի և լցակարերը գուլպաների վրա. ամեն ինչ կարծես առաջվանն էր, միայն փոքր, շատ փոքր:

Ո՛չ, կանգնելն ու սպասելն օգուտ չունեն. նա համոզված էր: Պետք էր մի բան անել: Եվ նա մտածեց, որ ամենախելացի բանը թզուկին գտնելն ու նրա հետ հաշտվելն է: Տղան թռավ ներքև ու սկսեց շուրջը նայել: Փնտրեց պահարանների հետևում, աթոռների տակ, բազմոցի կողքին և բուխարու մեջ: Նույնիսկ չզլացավ մկների բներում որոնելու, բայց ապարդյուն:

Ու մինչ ելք էր փնտրում, լալիս էր ու խնդրում ու խոստանում այն ամենը, ինչ իր մտքով անցնում էր: Այլևս երբեք իր խոստումը չի խախտի, անվայել բաներ չի անի, և երբեք, երբեք քարոզ կարդալիս չի քնի, միայն թե նորից մարդ դառնա: Ինքը շատ լավ տղա կլինի, կօգնի բոլորին և կինազանդվի ծնողներին: Ու թեև շատ խոստումներ տվեց, բայց նրան ոչինչ, ոչինչ չօգնեց:

Հանկարծ նա հիշեց, որ մայրիկն ասում էր՝ փոքրիկ մարդիկ իրենց տները շինում են գոմերում, և որոշեց գնալ ու այնտեղ փնտրել թզուկին: Ուղղակի երջանկություն էր, որ սենյակի դուռը կիսաբաց էր մնացել, որովհետև եթե փակ լիներ, ինքը ոչ մի կերպ սողնակին չէր կարողանա հասնել: Նա առանց դժվարության դուրս սահեց:

Նախասենյակում նա շուրջը նայեց, որ իր փայտե կոշիկները գտնի. տանը նա սովորաբար գուլպաներով էր ման գալիս: Նա չէր պատկերացնում, թե ինչպես է քայլելու փայտե այս մեծ, անճոռնի կոշիկներով: Հենց այդ պահին շեմքին տեսավ մի գույգ պատիկ կոշիկներ: Երբ տղան հասկացավ, որ թզուկն այնքան հեռատես է եղել, որ իր կոշիկներն էլ է կախարդել, ավելի անհանգստացավ: Նշանակում է՝ թզուկը մտադրություն ուներ կախարդանքը դեռ երկար պահելու:

Տնակի առջև՝ կաղնու տախտակի վրա, թռչկոտում էր մի մոխրագույն ճնճղուկ: Տղային տեսնելուն պես այնպես գորռաց.

- Չի՛կ-չի՛կ-չի՛կ, ապա նայե՛ք սագարած Նիլսին: Տեսե՛ք, տեսե՛ք, մատնաչափ է դարձել: Նայե՛ք Նիլս Հոլգերսոն Մատնաչափիկին:

Սագերն ու հավերը, որոնք թափառում էին բակում, շրջվեցին, նայեցին տղային ու կչկչալով իրար անցան:

- Ծուղրուղր՛ւ, - կանչեց աքաղաղը, - տեղն է նրան: Ծուղրուղր՛ւ, նա իմ կատարն էր քաշքշում:

- Կո՛-կո՛-կո՛-կո՛, շատ էլ լավ է եղել, - ասացին հավերն ու շարունակեցին կչկչալ, - կո՛-կո՛-կո՛:

Սագերը, երամ կազմելով, վիզները երկարեցին, գլուխները մոտեցրին իրար և հարցրին.

- Ղա՛-ղա՛-ղա՛, ո՞վ է արել, ո՞վ է արել, ղա՛-ղա՛-ղա՛:

Ամենատարօրինակն այն էր, որ տղան հրաշալի հասկանում էր նրանց լեզուն: Նա այնքան էր զարմացել, որ արձանացել էր դռան շենքին ու լսում էր: «Երևի նրանից է, որ թզուկ եմ դարձել, - մտածեց նա: - Այդ պատճառով էլ սկսել եմ թռչունների լեզուն հասկանալ»: Նրա համար անտանելի էր լսելը, թե հավերն ինչպես են անընդհատ կրկնում, որ տեղն է իրեն: Նա մի քար նետեց նրանց վրա և գոռաց.

- Չայններդ կտրեք, անպիտաններ:

Բայց նրա մտքով էլ չանցավ, որ ինքն առաջվա տղան չէ, և հավերն իրենից այլևս չեն վախենում: Բոլոր հավերը նետվեցին տղայի կողմը, արագ շրջապատեցին նրան ու սկսեցին միասին բղավել.

-Կո՛-կո՛-կո՛, շատ էլ լավ է եղել, կո՛-կո՛-կո՛, տեղն է քեզ, տեղն է քեզ:

Տղան փորձեց նրանցից փախչել, սակայն ճուտիկները վազում էին նրա հետևից ու այնպես ճչում, որ մի պահ նրան թվաց, թե խլանում է: Երևի թե չկարողանար նրանցից ազատվել, եթե հենց այդ խահին չհայտվել տան կատուն: Կատվին տեսնելուն պես հավերը լռեցին և սկսեցին հողը փորփորել՝ ձևացնելով, թե ձիձուներ հանելուց բացի՝ այլ բանի մասին չեն են մտածում:

Տղան վազեց կատվի մոտ:

- Սիրելի՛ փիսիկ, - ասաց նա, - դու երևի այստեղ բոլոր անկյուններն ու թաքստոցները գիտես: Բարի փիսիկ եղիր, ասա՛ ինձ՝ որտեղ գտնեմ թզուկին:

Կատուն անմիջապես չպատասխանեց: Նա նստեց գետնին, փարթամ պոչով օղակեց իր թաթերն ու աչքերը հառեց տղային: Դա մի սև մեծ կատու էր՝ կրծքին սպիտակ նշանով: Նրա մորթը խնամված էր, փափուկ և փայլում էր արևի տակ: Նա ճանկերը թաթերի տակ էր առել, իսկ աչքերը մուգ մոխրագույն էին. միայն նրանց կենտրոնում նեղ սև շերտ կար: Թվում էր՝ այդ կատուն շատ խոհուն է, բարեհամբույր և ամենաանմեղ արարածն է աշխարհում:

- Ես շատ լավ գիտեմ, թե որտեղ է ապրում թզուկը, - ասաց նա քնքուշ ձայնով, - բայց դա դեռ չի նշանակում, որ *քեզ* ասելու եմ:

- Սիրելի՛ փիսիկ, դու ինձ պետք է ասես թզուկի տան տեղը, - ասաց տղան: - Չե՞ս տեսնում, թե ոնց է ինձ կախարդել:

Կատուն մի քիչ բացեց կկոցած աչքերը, որոնք ասես կանաչեցին չարախնդության փայլից: Նա պտտվեց տղայի շուրջը, մռլտաց, ապա վերջապես պատասխանեց.

- Մյա՛նու, արդյոք ես քեզ պետք է օգնեմ նրա համար, որ հաճախ քաշել ես պոչիցս:

Տղան այնքան բարկացավ, որ մի պահ մոռացավ, որ այժմ ինքը շատ փոքր է ու անօգնական:

- Այ, հիմա ես քո պոչը նորից կքաշեմ, ես կարող եմ, - բացականչեց նա ու վազեց դեպի կատուն:

Հաջորդ վայրկյանին կատուն այնպես փոխվեց, որ տղան դժվարությամբ հավատաց, որ դա նույն կենդանին է: Նրա մորթին բիզ-բիզ էր կանգնել, ոտքերը լարվել էին, պոչը հաստացել և կարճացել էր, ականջները հետ էին գնացել ու կպել գլխին: Կատուն ուռցրել էր մեջքը և սկսել հողը ճանկռել: Նրա բերանը փրփրակալել էր, իսկ լայն բացած աչքերը փայլում էին կարմիր կրակով:

Տղան չվախեցավ կատվից և նույնիսկ ընդառաջ գնաց նրան: Կատուն թռավ և վայրէջք կատարեց ուղիղ տղայի վրա՝ նրան գետնին գամելով, և առջևի թաթերը դրեց նրա կրծքին: Կենդանու բաց երախը տղայի կոկորդի մոտ էր:

Տղան զգաց, որ ճանկերը, անցնելով շապիկի և բաճկոնի միջով, ծակում են իր մարմինը, և ինչպես են իր կոկորդը մխրձվում կատվի ահարկու ժանիքները: Նա որքան ուժ ուներ գոռաց, բայց ապարդյուն. ոչ ոք օգնության չշտապեց: Տղան սարսափեց՝ կարծելով, թե հասել է իր վերջին ժամը: Բայց կատուն հանկարծ ներս քաշեց ճանկերը և բաց թողեց տղայի կոկորդը:

- Դե ինչ, սա էլ բավական է: Այս անգամ ես քեզբաց կթողնեմ հանուն իմ տանտիրուհու: Ես միայն ուզում էի, որ դու իմանաս, թե հիմա մեզնից ով է ուժեղ:

Այս ասելով՝ կատուն հեռացավ՝ նույնքան հանգիստ ու հնազանդ, որքան տղային հանդիպելուց առաջ: Տղան այնքան էր ցնցված, որ բառ անգամ չասաց, այլ շտապեց գոմ՝ փնտրելու թզուկին:

Գոմում ընդմանեղ երեք կով կար, բայց երբ տղան ներս մտավ, նրանք բառաչելով ու դոփելով այնպիսի աղմուկ բարձրացրին, որ կարելի էր կարծել, թե առնվազն երեսունն են:

- Մո՛ւ, մո՛ւ, մո՛ւ, - բառաչեց Մայիսյան Վարդը, - ի՛նչ երջանկություն, որ աշխարհում արդարություն կա:

- Մո՛ւ, մո՛ւ, մո՛ւ, - երգում էին երեքը միասին:

Տղան չէր կարողանում հասկանալ, թե կովերն ինչ են ասում, որովհետև ամեն մեկն ուզում էր մյուսից ավելի բարձր գոռալ: Տղան ուզում էր հարցնել թզուկի մասին, բայց չէր կարողանում այնպես անել, որ իրեն լսեն, որովհետև կովերը գոռոգում էին: Նրանք իրենց այնպես էին պահում, ասես տղան նրանց վրա հարևանի շանն էր բաց թողել: Նրանք դոփում էին իրենց հետևի ոտքերով, թափահարում վզները, ձգում գլուխները և իրենց բաժանող տարածությունը չափում եղջյուրներով:

- Դե՛, մոտեցի՛ր, - ասաց Մայիսյան Վարդը, - և ես քեզ այնպես կխփեմ, որ էլ երբեք չես մոռանա:

- Դե՛, արի՛ այստեղ, - սպառնաց Ոսկե Շուշանը, - և կպարես իմ եղջյուրների վրա:

- Մոտեցի՛ր, մոտեցի՛ր և դու կիմանաս, թե ինչ ես զգում, երբ քեզ վրա փայտե կոշիկ են զցում, ինչպես անցյալ ամառ էիր անում,- գոռաց Աստղը:

- Արի՛, արի՛ այստեղ, և ես քեզ դաս կտամ այն իշամեղվի համար, որ ականջս մտցրիր,- գոռաց Ոսկե Շուշանը:

Մայիսյան Վարդը, որ նրանցից ամենատարեցն ու իմաստունն էր, բոլորից շատ էր բարկացած:

- Դե՛, մոտեցի՛ր, - ասաց նա, - որ ես քեզ հատուցեմ այն բանի համար, որ շատ անգամ մորդ ձեռքից կաթի դուլն ես խլել ու թափել կաթը, բոլոր այն որոգայթների

համար, որ լարել ես մորդ դեմ, երբ նա գալիս էր՝ դույլերը ձեռքին, և այն արցունքների համար, որ նա թափել է այստեղ քո պատճառով:

Տղան ուզում էր գոռալ, բացատրել կովերին, թե ինչպես է զոջում, որ դաժանաբար է վարվել նրանց հետ, ուզում էր խոստանալ, որ այսուհետ իրեն լավ է պահելու, եթե միայն իմանա, թե որտեղ է թզուկը: Բայց կովերը նրան չէին լսում: Նրանք այնպիսի աղմուկ-աղաղակ էին բարձրացրել և այնպես էին մոլեգնում, որ տղան սկսեց վախենալ, որ նրանք կարող են կտրել իրենց շղթաները: Եվ նա հասկացավ, որ ամենալավը այստեղից հեռանալն է:

Եվ տղան, բոլորովին հուսահատ, դուրս եկավ: Նա արդեն հասկացել էր, որ ոչ ոք չէր ուզում օգնել իրեն՝ փնտրելու թզուկին: Թզուկին գտնելուց էլ երևի մեծ օգուտ չէր լինի:

Նա բարձրացավ իրենց հողամասը օղակող ցանկապատին, որի վրա փարթամորեն աճել էին փշավարդն ու մոշը: Այստեղ նա նստեց՝ մտածելու, թե ինքն ինչ պիտի անի, եթե էլ չկարողանա մարդ դառնալ: Երբ հայրիկն ու մայրիկը եկեղեցուց վերադառնան, շատ կգարմանան: Այո՛, կգարմանան բոլորը, ողջ երկիրը: Մարդիկ կգան և՛ Արևելյան Վենմենհյոգից, և՛ Թորփից, և՛ Սքերուփից: Ողջ Վենմենհյոգը կվազի՝ իրեն նայելու: Միգուցե մայրն ու հայրն իրեն վերցնեն ու տանեն՝ Չիվիքի տոնավաճառում փողով ցույց տալու:

Ո՛չ, սարսափելի էր նույնիսկ այդ մասին մտածելը: Նա գերադասում էր, որ ոչ մի մարդ իրեն այլևս չտեսնի:

Ի՛նչ դժբախտ էր նա: Աշխարհում նրա նման դժբախտ մարդ չկար: Նա այլևս մարդկային արարած չէր. հրեշ էր:

Կամաց-կամաց նա սկսեց հասկանալ, թե ինչ է նշանակում այլևս մարդ չլինել: Նա ոչինչ չուներ, նրան զրկել էին ամեն ինչից. նա էլ չէր կարող խաղալ տղաների հետ, ծնողների մահից հետո չէր կարող ժառանգել իրենց հողակտորը, և անշուշտ, ոչ մի աղջիկ չէր ուզենա ամուսնանալ նրա հետ:

Նա նստել ու նայում էր սպիտակեցրած պատերով իր տանը, որը փոքր էր և ասես ծղոտե բարձր տանիքի ծանրության տակ գետնին էր կպել: Դրսի կառույցները նույնպես մեծ չէին, իսկ հողի վարած կտորներն այնքան փոքր էին, որ ձին էլ հազիվ կկարողանար շրջվել դրանց վրա: Եվ որքան էլ փոքր ու աղքատիկ լիներ այս հողամասը, *հիմա* նրան շատ լավն էր թվում: Առնետի բունը ախռում նրա համար ապրելու միակ տեղն էր:

Հրաշալի եղանակ էր դրսում: Երկինքը կապույտ-կապույտ էր, ծառերը բողբոջում էին, առվակները՝ կարկաչում, թռչուններն ուրախ ճռվողում էին: Միայն տղան էր տխուր. էլ երբեք ոչինչ չի կարող իրեն ուրախացնել:

Այդպիսի կապույտ երկինք նա դեռ չէր տեսել: Թռչունների երամները վերադառնում էին ճամփորդությունից: Նրանք գալիս էին օտար երկրներից՝ թռչելով Արևելյան ծովով, անցել էին շվեդական Սմյուգեհուկ հրվանդանը և բռնել հյուսիսի ճանապարհը: Անցնողների մեջ տարբեր թռչուններ կային, բայց տղային ծանոթ էին միայն վայրի սագերը, որոնք թռչում էին երկու երկար շարքերով, որոնք անկյուն էին կազմում:

Մի քանի երամ արդեն անցել էր: Թեև սագերը շատ բարձր էին թռչում, տղան, այնուամենայնիվ, լսում էր, թե ինչպես են նրանք ճռվողում:



- Դեպի սարե՛րը: Հիմա մենք թռչում ենք դեպի սարե՛րը:

Երբ վայրի սագերը տեսան ընտանի սագերին, որոնք այսուայն կողմ էին անում բակում, ներքև թռան և կանչեցին.

-Եկե՛ք մեզ հետ: Եկե՛ք մեզ հետ: Մենք թռչում ենք դեպի սարե՛րը:

Ընտանի սագերը չէին կարողանում գայթակղությանը դիմանալ, ձգում էին իրենց վզները և լսում, բայց խոհեմաբար պատասխանում էին.

- Մենք այստեղ էլ շատ լավ ենք ապրում: Մենք այստեղ էլ շատ լավ ենք ապրում:

Արդեն ասել ենք, որ անհավանական լավ եղանակ էր, և իսկական հաճույք էր երկնքում թեթևորեն սավառնելը: Եվ վայրի սագերի ամեն մի նոր երամի հետ ընտանի սագերն ավելի ու ավելի էին անհանգստանում: Մի քանի անգամ նույնիսկ այնպես պատահեց, որ նրանք թափահարեցին թևերը, ասես մտադրություն ունեին թռչել գնալու: Բայց ծեր մայր սագը միշտ ասում էր նրանց.

- Խելքի՛ եկեք: Հիմարություն մի՛ արեք: Այդ արարածները դեռ շատ են տուժելու ցրտից ու սովից:

Մի երիտասարդ սագ կար, որին վայրի սագերը բոցավառել էին արկածախնդրության կրքով:

- Եթե մի ուրիշ երամ անցնի այս կողմով, ես նրանց հետ կգնամ, - ասաց նա:

Հետո իսկապես մի երամ էլ եկավ, որը ճռվողում էր մյուսների նման, և երիտասարդը սագը բացականչեց.

- Սպասե՛ք, սպասե՛ք, ես գալիս եմ ձեզ հետ:

Նա բացեց իր թևերը և օդ բարձրացավ, բայց սովոր չէր թռչելու և քարի պես գետին ընկավ:

Երևի թե վայրի սագերը լսել էին նրա կանչը, որովհետև անշտապ հետ թռան՝ տեսնելու՝ գալի՞ս է, թե՞ ոչ:

- Սպասե՛ք, սպասե՛ք,- նորից գոռաց սագը և օդ բարձրանալու մի փորձ էլ արեց:

Այս ամենը տղան լսեց, երբ նստած էր ցանկապատին: «Շատ ափսոս կլինի, - մտածեց նա, - եթե այդ մեծ սագը թռչի գնա: Դա մեծ կորուստ կլինի մայրիկի և հայրիկի համար: Նրանք շատ կվշտանան, եկեղեցուց վերադառնալով՝ տեսնեն, որ նա չկա»:

Նա այս անգամ էլ բոլորովին մոռացավ, որ փոքր է ու անօգնական: Նա ցած թռավ ցանկապատից և ամուր գրկեց սագի վիզը:

- Ո՛չ, ո՛չ, Այս անգամ դու չես թռչի, - գոռաց նա:

Բայց հենց այդ պահին երիտասարդ սագը, թևերը թափահարելով, վերջապես թռավ: Նա չէր կարող կանգնել, որ վրայից գցի տղային, ուստի օդ բարձրացավ նրա հետ միասին:

Նրանք այնքան արագ թռան, որ տղան չհասցրեց աչքերը թարթել: Մինչ հասկացավ, որ ինքը պետք է սագի վիզը բաց թողնի, այնքան էին բարձրացել, որ կտոր-կտոր կլինեի, եթե գետին ընկներ:

Միակ բանը, որ կարող էր անել, ավելի հարմար տեղավորվելն էր: Մեծ դժվարությամբ և վախվխելով նա շուռ եկավ և նստեց սագի մեջքին: Հեշտ չէր հավասարակշռությունը պահպանել սագի սայթաքուն մեջքին՝ երկու աշխատող

թւերի միջև: Նա խոր թաղվեց փետուրների մեջ և նրանցից ամուր բռնեց երկու ձեռքերով, որ ցած չընկնի:

*Անգլերենից թարգմանեց Նարինե Մադոյանը:*